Բաքվի ռազմական բյուջեի նոր ռեկորդը

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, փաստորեն, կատարեց իր երկրի ռազմական բյուջեն Հայաստանի ընդհանուր բյուջեին հավասարեցնելու՝ նախորդ տարի բազմիցս հնչեցրած խոստումը: Նախօրեին նա հայտարարել է, որ ընթացիկ տարում Ադրբեջանի ռազմական բյուջեն, ի համեմատ 2007-ի, կավելանա 53 տոկոսով՝ կազմելով շուրջ 2 միլիարդ դոլար: Նշենք, որ այս թիվն ընդամենը կես միլիարդով է պակաս Հայաստանի այս տարվա պետբյուջեի ընդհանուր չափից: Ուշագրավ է նաեւ Ալիեւի այն արձանագրումը, որում հստակ երեւում է այդ երկրի ֆինանսական կարողությունների աճի՝ մեզ համար խիստ մտահոգիչ դինամիկան: «Վերջին 4-5 տարիներին մեր երկրի ռազմական բյուջեն 150 միլիոն դոլարից արդեն հասել է 1 միլիարդ 300 միլիոն դոլարի: Նույն ժամանակահատվածում Ադրբեջանի պետական բյուջեն տասնապատկվել է», - ըստ «Ռոյթերզ» գործակալության, հայտարարել է Ադրբեջանի ղեկավարը:

Ներկայացված ցուցանիշների համատեքստում ասել, որ Հայաստանը հայտնվել է խիստ աննպաստ վիճակում, նշանակում է ոչինչ չասել: Ըստ էության, սրանք թվեր են, որոնք ի վիճակի են ամենամոտ ապագայում իրենց ռեալ ու չափազանց վտանգավոր դրսեւորումներն ունենալ հայ-ադրբեջանական հակամարտության գոտում, հատկապես, եթե հաշվի առնենք, որ վերջին ամիսներին Բաքուն բավական ճարպկորեն անհրաժեշտ միջազգային-իրավական ֆոն է ապահովել հարցի ուժային լուծման համար: Վերջապես՝ սրանք թվեր են, որոնք բացարձակապես ոչ մի համեմատության մեջ չեն մտնում Հայաստանի վիճակի կամ երեւակայությունից ուժեղ որեւէ այլ հայկական գերատեսչության ներկայացրած անգամ ամենահամարձակ «վագրային» ցուցանիշների հետ: Բնական հարց է առաջանում. ի՞նչ կարող է սրան հակադրել Հայաստանը: Չվախենալով կրկնվելուց, թեմայի համատեքստում անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ նախկինում արդեն իսկ շրջանառված մի քանի հայտնի պնդումների: Օրինակ, շատ է խոսվում այն մասին, որ Հայաստանն էլ, Ադրբեջանի օրինակով, ունի իր «նավթը»՝ հանձին Սփյուռքից ստացվող ֆինանսական օգնությունների: Թերեւս պետք չէ շատ խելոք լինել՝ այսօրինակ պնդումները միանգամից անհեթեթ որակելու համար: Նախ՝ հարկ է գիտակցել, որ ադրբեջանական սփյուռքը եւս հայրենիքում բնակվող իր հայրենակիցներին մեծ քանակությամբ ֆինանսական միջոցներ է ուղարկում: Բացի այդ, չափազանց դժվար է պատկերացնել, թե Հայաստանի բնակչության մի հատվածի պարզ վերապրման խնդիրները հազիվ լուծող այդ ֆինանսական հոսքերից ինչպե՞ս պետք է մասհանում արվի՝ հօգուտ ՀՀ ռազմական բյուջեի կարիքների: Բավական հիմնավորված կարծիքներ կան այն մասին, որ ադրբեջանական նավթի գործոնին Հայաստանը կարող էր հակադրել միայն մեկ բան՝ բաց շուկայական տնտեսություն եւ անհամեմատ զարգացած ու գործուն ժողովրդավարական ինստիտուտներ: Այդ պարագայում հայկական կողմը վստահաբար հնարավորություն կունենար մի հարվածով լուծելու առնվազն երկու կարեւորագույն խնդիր: Նախ՝ հայ ձեռնարեց հանրությունը կարճ ժամանակում կհարստացներ ինչպես իրեն, այնպես էլ պետությանը:

Բացի այդ, Հայաստանի ժողովրդավարական իմիջը միջազգային ասպարեզում անգնահատելի ծառայություն կմատուցեր ղարաբաղյան թնջուկը հնարավորինս հայանպաստ տարբերակով լուծելու գործին:

Հարկ չկա, թերեւս, հիշեցնելու, թե Հայաստանի պատասխանատուներն ինչպես են իմաստավորում այս պարզագույն ճշմարտությունները օրավուր աճող ադրբեջանական ագրեսիայի սպառնալիքի դիմաց:

Արամ ՎԻՐԱԲՅԱՆ